Հայտերի ներկայացման հրավեր

Ամսաթիվը՝	**25 փետրվարի 2017թ.**
Վարկի համար և ծրագրի անվանումը՝	**3284-ARM (ԱԶԲ), Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր**
Պայմանագրի համարը և անվանումը՝	**A-01YN, ք.Երևանի Ռ.Իշխանյանի անվ. թիվ 153 հիմնական դպրոցի կառուցում**
Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝	**27 մարտի 2017թ.**

1. Հայաստանի Հանրապետությունը Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) ստացել է ֆինանսավորում Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի իրականացման համար: Միջոցների մի մասն օգտագործելու է վերոնշյալ պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Մրցույթը բաց է բոլոր իրավասու հայտատուների համար ԱԶԲ-ի անդամ-երկներից:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) («Պատվիրատուն») հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու հայտատուներին ք.Երևանի Ռ.Իշխանյանի անվ. թիվ 153 հիմնական դպրոցի շինարարական աշխատանքների («Աշխատանքները») կատարման և ավարտելու համար:
3. Ազգային մրցակցային մրցույթը անց է կացվելու համաձայն ԱԶԲ-ի «Մեկ փուլ. Մեկ ծրար» ընթացակարգով և բացումը անց է կացվելու իրավասու երկրներից բոլոր Հայտատուների համար ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթերում:
4. Միայն հետևյալ հիմնական որակավորումներով իրավասու Հայտատուները պետք է մասնակցեն տվյալ մրցույթում.

   որակավորման պահանջները ներառում են. ա/հաղթող Հայտատուի շինարարության գծով պահանջվող տարեկան միջոցների շրջանառությունը վերջին հինգ տարիներից որևէ մեկ տարում պետք է կազմի 972,000,000 ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի 569,000,000 ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն 1,138,000,000 ՀՀ դրամից, գ/ հաղթող Հայտատուի նվազագույն ֆինանսական միջոցները պետք է լինեն՝ 108.000.000 ՀՀ դրամ մեկ կազմակերպության համար, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հաստատված «Քաղաքացիական», «Էներգետիկ» և «Հիդրոտեխնիկական» լիցենզիաներ:
5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մրցութային փաստաթղթերը ուսումնասիրելու համար Հայտատուները պետք է դիմեն՝

   Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
   Արթուր Սողոմոնյանին
   ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, 406 սենյակ, 4-րդ հարկ
   Հեռ.՝ +374 60 501 560
   Էլ-փոստ՝ procurement@atdf.am
6. Մրցութային փաստաթղթերը հայերեն լեզով տեղադրված են www.gnumner.am և www.atdf.am կայքէջերում: Մրցութային փաստաթղթերի գնելու համար, իրավասու Հայտատուները պետք է

- դիմեն վերոնշյալ հասցեով պահանջելով «A-01YN, ք.Երևանի Ռ.Իշխանյանի անվ. թիվ 153 հիմնական դպրոցի կառուցում» մրցութային փաստաթղթերը,
- բանկային փոխանցումով վճարեն 3,000 ՀՀ դրամ չհատուցվող վճար:

7. Հայտատուները պետք է ներկայացնեն իրենց հայտը.
    - վերոնշյալ հասցեով,
    - վերջնաժամկետից ոչ ուշ՝ 27 մարտի 2017թ., ժամը 12:00 :
    - Մրցույթի ապահովման հայտարարագիրը ներառյալ, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթում, Մրցութային առաջարկները կբացվեն անմիջապես հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո մասնակցել ցանկություն հայտնած Հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ:
    - Նախահաշիվը անհրաժեշտ է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: